փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը), Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակը, Դատարանը փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման մասով գալիս է այն եզրահանգման, որ սահմանված փաստաբանի վարձատրության չափը նշված գործով ողջամիտ և խելամիտ չէ: Դատարանը փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման մասով գտնում է, որ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության չափ պետք է դիտել 150.000 ՀՀ դրամը, որը նման պայմաններում ենթակա է բռնագանձման պատասխանողից հօգուտ հայցվորի, իսկ դատական ծախսերի հարցը մնացած մասով պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Աննարկա» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 23.08.2024 թվականի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից վերջինիս կարիքների համար քիմիական նյութերի մատակարարման թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-4» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու և «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի կողմից 03.09.2024 թվականին կայացված «Աննարկա» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու թիվ 1046 որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

1.1. անվավեր ճանաչել 23.08.2024 թվականին «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կարիքների համար քիմիական նյութերի մատակարարման թիվ ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-4 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը:

1.2. անվավեր ճանաչել «Աննարկա» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 03.09.2024 թվականի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Արմեն Իսահակյանի կողմից ընդունված 1046 որոշումը:

2. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «Աննարկա» ՍՊ ընկերության բռնագանձել 80.000 ՀՀ դրամ՝ որպես որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «Աննարկա» ՍՊ ընկերության բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատվության գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am